ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՈՐԲԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գոհար Խանումյան

Առաջին աշխարհամարտը մեծ փորձություն դարձավ ռազմական գործողությունների թատերաբեմում հայտնված տարածքների խաղաղ բնակչության համար, ովքեր հարկադիր լքում էին իրենց բնակության վայրերը՝ դառնալով գաղթական: Ասվածը մեծապես վերաբերում է Կովկասյան ռազմաճակատին, որտեղ ռազմական գործողությունների ծավալումը և ռազմաքաղաքական նպատակներով ռուսական զորքերի տեղաշարժերն արևմտահայության դրության էլ ավելի վատթարացման պատճառ դարձան: Արևմտահայերի մի հատվածը՝ հիմնականում Վանի և Էրզրումի նահանգներից, գաղթեց և տեղափոխվեց Ռուսական կայսրության ռազմական գործողություններից ավելի հեռավոր շրջաններ:

Արդեն 1914 թ. ամռան կեսերին Ռուսական կայսրությունում Կովկասյան և Արևմտյան ռազմաճակատներից գաղթականների թիվը վիթխարի չափերի էր հասնում:

Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները տեղի էին ունենում հիմնականում Արևմտյան Հայաստանի տարածքում: Օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորությունից՝ երիտթուրքական կառավարությունը ռուս–թուրքական ճակատամերձ գոտուց «վստահություն չներշնչելու» պատրվակով իրականացրեց օսմանահպատակ հայերի բռնի տեղահանությունը, որը գործադրվեց 1915 թ. մայիսին սուլթանի կողմից վավերացված «Տեղահանության մասին» օրենքի շրջանակներում: Օրենքի իրական նպատակն էր «լիովին ոչնչացնել ու վերացնել» հայերի կարծեցյալ «վտանգավոր շարժումը» և ոչ թե նրանց վերաբնակեցնել կայսրության՝ ռուսական ռազմաճակատից հեռու գտնվող տարածաշրջաններում[1]: Առաջին հայ գաղթականները Կովկասյան ռազմաճակատի սահմանամերձ բնակավայրերի հայ ազգաբնակչությունն էր: 1914 թ. նոյեմբերի 22-24-ին Բասենի թուրքական տարածքից հայությունը՝ մոտավորապես 10.000-14.000 գաղթական[2], նահանջող ռուսական զորքերի հետ գաղթեց Քյորփի-քյոյից[3]: Խոսելով Բասենի հայության գաղթի մասին՝ Կ. Սասունին գրում է. «Նահանջ բառը սարսափի ու գլխակորույս փախուստի իր իմաստով, մնաց անջնջելի հայ ժողովրդի մտքէն, ու այդ օրերէն սկսած գաղթական բառը դարձաւ թրքահայու, թշուառ ու օգնութեան կարոտ մարդուն հոմանիշ»[4]:

---

[1] Մանրամասն տե՛ս Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կառավարության որոշումը հայերի տեղահանության մասին (1915թ. մայիսի 30), *«Հայագիտության հարցեր» 1(2014),* էջ 5:

[2] *Докладъ уполномоченного Комитета въ пределахъ Наместничества Его Императорскаго Величества на Кавказъ Сенатора Н. Д. Чаплина*, Петроградъ, 1914, с. 8.

[3] Մանրամասն տե՛ս *Докладъ по первой поездке предсведателя Комитетеа А. Б. Нейдгарда комитеты Ея Императорксаго Высочества Великой Княжны Татіаны Николаевны для оказания временной помощи пострадавшимъ отъ военныхъ бедствій,* Петроградъ, 1914, с. 7.

[4] Կ. Սասունի, *Թրքահայաստանը Ա. Աշխարհամարտի ընթացքին (1914-1918). Թրքահայոց գաղթաշարժերը եւ անոնց դերը Հայաստանի Հանրապետութեան մէջ,* Պէյրութ: Սևան, 1966, էջ 53:

Գաղթականների երկրորդ, անհամեմատ խոշոր ալիքն սկսվեց Սարիղամիշից ռուսական զորքերի նահանջի ժամանակ, ինչի հետևանքով ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած բնակավայրերից (Սարիղամիշ, Կարս, Կաղզվան, Արդահան, Օլթի, Արդվին, Դիադին, Բաշկալե) 1914 թ. վերջին Անդրկովկասում՝ հիմնականում Թիֆլիսի և Երևանի նահանգներում ապաստանած հայ գաղթականների թիվը հասնում էր շուրջ 30 000-ի (2124 տուն)[5]: Արդվինի, Արդանուճի հայ գաղթականների մի մասը հաստատվեց Բաթումում[6], մի որոշ մասն էլ՝ Քութայիսիում[7]: 1915 թ. փետրվար-մայիս ամիսներին ռուսական զորքերը գրավեցին Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոտուրը, Արճեշը և Վանը: Սակայն 1915թ. ամռանը ռուսական զորքերի նահանջի ժամանակ գաղթեցին ավելի քան 170.000 հայ Բասենից, Աղբակից, Բիթլիսից, Մուշից, Մանազկերտից, Ալաշկերտից[8]:

Արևմտահայերի երրորդ գաղթն սկսվեց 1916 թ. հուլիսի 27-ին, այն բանից հետո, երբ Թուրքիան մեծաթիվ զորքեր կենտրոնացրեց Բաղեշում: 1916 թ. ամռանը գաղթեցին Վանի, Մուշի, Բիթլիսի և Արևմտյան Հայաստանի այլ շրջանների շուրջ 50.000 գաղթականներ, որոնց գումարվեցին նաև 1916 թ. նոյեմբերին գաղթած 16.000 հայեր:

Արևմտահայ գաղթականների մեծ մասն ապաստանել էր Կովկասում: Կովկասյան ճակատի գաղթականների դրությունը կարգավորող գլխավոր մարմնի դիվանատան տվյալների համաձայն՝ Կովկասյան երկրամասում 1917 թ. սկզբին հայ գաղթականների թիվը կազմում էր 283. 063[9], որոնց մեջ մեծ թիվ էին կազմում կանայք և անչափահաս երեխաները: Վերջիններիս մեջ զգալի էր խնամազուրկ, ծնողազուրկ երեխաների թիվը[10]: Կովկասում հայտնված բազմահազար հայ գաղթականության շրջանում մոլեգնում էին տարբեր համաճարակային հիվանդություններ, քանի որ նրանք գտնվում էին տնտեսական և սանիտարական ծայրահեղ վատթար պայմաններում: Կովկասյան երկրամասում գաղթականական կարիքները բավարարելու համար 1915 թ. հոկտեմբերին Կովկասի փոխարքային կից Կովկասյան ճակատի գաղթականների տեղավորման գլխավոր լիազոր նշանակվեց գեներալ-մայոր Ալ. Թամամշյանը (Թամամշևը)[11]:

---

5 Аветисян А., *Первая мировая война и армянские беженцы (1914-1917)*, автореферат, Ереван, 1989, с. 12

6 *Докладъ уполномоченнаго Комитета…*, стр. 6.

7 Նույն տեղում, էջ 7:

8 Տե՛ս Հարությունյան Ա., Վան-Վասպուրականի ազգաբնակչության 1915 թ. հուլիսյան գաղթը, *«Լրաբեր հասարակական գիտությունների»*, № 2, 2002, էջ 56:

9 Հարությունյան Ա., Հայոց մեծ եղեռնը և հայ գաղթականությունը Կովկասում 1914-16թթ., *«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր»*, №6, 2002, Երևան, էջ 25:

10 Ա. Խատիսովը (Խատիսյանը) 1915թ. ամռանը Էջմիածին կատարած իր ուղևորության մեջ նշում է, որ հայ գաղթականների ¾-ը երեխաներ, իսկ մնացածը կանայք և ծերեր էին: Երիտասարդ տղամարդիկ ընդհանրապես բացակայում էին: Տե՛ս նաև *Беженцы и выселенцы. Отдельные оттиски изъ № 17 известіи Всероссійскаго Союза Городовъ*, Москва, 1915, стр. 93:

11 Հարությունյան Ա., *Հայոց Մեծ եղեռնը և հայ գաղթականությունը…*, էջ 26:

Հաշվի առնելով Ռուսական կայսրության ողջ տարածքում ռազմական գործողությունների շրջաններից տեղահանված բնակիչների՝ գաղթականների զանգվածային մեծ ալիքը՝ Ռուսաստանի ներքին գործերի նախարարության կազմում 1915 թ. հուլիսին ստեղծվեց «Հակառակորդի կողմից գրավված բնակավայրերի գաղթականների ապահովման հարցով խորհուրդ»[12]:

1915 թ. օգոստոսի 30-ին հրապարակվեց «Գաղթականների կարիքների ապահովման» մասին օրենքը, որի գործադրման համար հատկացվեց 25 մլն ռուբլի[13], ինչպես նաև ներքին գործերի նախարարության կազմում ստեղծվեց «Գաղթականների տեղավորման բաժին»[14]: Ըստ այդ օրենքի՝ գաղթական էին համարվում այն անձինք, ովքեր լքել են հակառակորդի կողմից գրավված կամ գրավման սպառնալիքի ենթակա տեղանքը, կամ ովքեր ռազմական կամ քաղաքացիական իշխանությունների կողմից տարհանվել են ռազմական գործողությունների տարածքից: Օրենքը տարածվում էր ոչ միայն Անտանտի դաշնակից երկրների, այլև Ռուսաստանի թշնամի պետությունների քաղաքացիների վրա[15]: Այսինքն՝ օսմանահպատակ հայ գաղթականները, հայտնվելով Ռուսական կայսրության տարածքում, պետության կողմից ստանում էին գաղթականի կարգավիճակ: Ռուսական կայսրության տարածքում ապաստանած գաղթականներին տրվում էր գաղթականական տոմս, որը թույլ էր տալիս օգտվել փախստականին ընձեռվող բոլոր արտոնություններից (ճաշարանից, դրամական և բժշկական օգնությունից, ժամանակավոր կացարանից): Օգոստոսի 30-ի օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գաղթականների հարցը կարգավորելու համար իշխանությունից բացի ներգրավվեցին տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական կազմակերպությունները[16]:

Օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ որպես խորհրդակցական և դիտորդական մարմին, ստեղծվեց «Գաղթականների տեղավորման հատուկ ժողով», որի մեջ պետական գերատեսչությունների հետ մեկտեղ ընդգրկվեցին մեկական ներկայացուցիչ զեմստվոյական և քաղաքային միություններից և 7-ական հոգի՝ Պետական դումայից և Պետական խորհրդից: Ժողովի մեջ ներգրավվեցին հայկական, լեհական, հրեական և այլ ազգային փոքրամասնությունների կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչներ[17]: Բացի այդ պահպանվեց նաև Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի կոմիտեի[18] գործունեությունը՝ համաձայն 1914թ. սեպտեմբերի 14-ի կանոնադրության[19]:

---

12 *Земское дело*, N22, 1915, стр. 1237.

13 Տե՛ս *Земское дело*, N19, 1915, էջ 1047:

14 Տե՛ս *Руководящія положенія по устройству беженцевъ*, Петроградъ, 1916, էջ 1:

15 Տե՛ս *Законы и распоряженія о беженцахъ*, Москва, 1916, էջ 2:

16 Տե՛ս *Земское дело*, N19, 1915, էջ 1047:

17 Նույն տեղում:

18 Մեծ իշխանուհի Տատյանա Նիկոլաևնայի հովանավորությամբ գործող 1914 թ. սեպտեմբերին ստեղծված հասարակական կազմակերպություն, որը զբաղվում էր գաղթականության հարցերով:

19 Տե՛ս *Земское дело*, N19, 1915, էջ 1047:

Առաջին աշխարհամարտի հենց սկզբին պետական օժանդակությանը զուգընթաց Ռուսական կայսրության տարբեր հայաշատ քաղաքներում (Մոսկվա, Պետրոգրադ, Աստրախան և այլն) հայ համայնքների նախաձեռնությամբ ստեղծվեցին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ, միություններ՝ հայ գաղթականների համար օգնություն կազմակերպելու նպատակով, իսկ նախկինում գործող որոշ բարեգործական հաստատություններ (Հայկական բարեգործական ընդհանուր միություն, Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն, Կովկասի հայոց բարեգործական ընկերություն և այլն) վերակազմակերպեցին իրենց գործունեությունն այս ուղղությամբ և իրենց կազմում ստեղծեցին գաղթականական հարցերով զբաղվող կոմիտեներ: Այս բոլոր կազմակերպությունների և միությունների գործունեությունը հետագայում կարգավորվում էր օգոստոսի 30-ի օրենքով[20]:

Սակայն միայն հայկական կազմակերպություններն ի վիճակի չէին լուծել հազարավոր հայ գաղթականների խնդիրները, ուստի այս հարցով սկսեցին զբաղվել ռուսական միությունները և կազմակերպությունները: Դրանցից էր Համառուսաստանյան քաղաքների միությունը (ՀՔՄ), որն Առաջին աշխարհամարտի տարիներին մեծապես օժանդակեց հայ գաղթականների օգնության կազմակերպման գործին: Համառուսաստանյան քաղաքների միությունը հիմնադրվել է Ռուսաստանի՝ Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշվելու հենց առաջին օրերին: 1914 թ. օգոստոսի 8-9-ը Մոսկվայի նահանգային դումայի նախաձեռնությամբ կայացավ քաղաքագլուխների առաջին համառուսական համագումարը, որտեղ հիմնադրվեց Համառուսական քաղաքների միությունը[21]: Կարճ ժամանակ անց այն վերածվեց համառուսական խոշորագույն հասարակական կազմակերպության: Արդեն 1914 թ. օգոստոսին ՀՔՄ-ի մեջ ընդգրկված էր 140 քաղաք[22]: 1917 թ. Միության մեջ ընդգրկված էր Ռուսաստանի 790 քաղաքներից 640-ը: Սակայն Միության մեջ առաջնային տեղ ունեին ռուսական 75 խոշոր քաղաքները, որտեղ ապրում էր Ռուսաստանի ամբողջ քաղաքային բնակչության 70%-ը[23]: Միության գլխավոր առաքելությունն էր իրականացնել հասարակության բոլոր խավերի կազմակերպված օժանդակությունը թիկունքում և ռազմաճակատում: Հարկ է նշել, որ հենց ՀՔՄ-ի գործուն աշխատանքների շնորհիվ հնարավոր եղավ լուծել ռազմաճակատում բժշկական օգնության արդյունավետ կազմակերպման հարցը: Երկրորդ կարևոր խնդիրը, որով զբաղվում էր ՀՔՄ-ը, ռազմաճակատային գոտուց վիրավոր զինվորականների և ռազմական գործողությունների հետևանքով փախստական բնակչության էվակուացիայի կազմակերպումը, նրանց հետագա կեցության ապահովումն էր:

---

[20] Մանրամասն տե՛ս Հարությունյան Ա., Հայ գաղթականական կոմիտեների գործունեությունը Առաջին աշխարհամարտի տարիներին, *«Էջմիածին»*, պաշտօնական ամսագիր Հայրապետական աթոռոյ Ս. Էջմիածնի, Յունիս-Յուլիս, 1994, էջ 111-123:

[21] Коробейников Ю. В., *Земская помощь в условиях Первой мировой войны в 1914-1917 гг. Всероссийские земский и городской союзы*, http://www.superinf.ru/view_helpstud.php?id=5468, (դիտվել է՝ 15.04.2014):

[22] Նույն տեղում:

[23] Տե՛ս Асташов А. Б., *Всероссийский союз городов. 1914-1918 гг.*, специальность 07.00.02, автореферат на соискание ученой степени кандидата исторических наук, Москва, 1994, էջ 12:

Առաջին աշխարհամարտի տարիներին ՀՔՄ-ը ռազմաճակատային գոտիներից էվակուացրեց գաղթականների շուրջ 30%-ը՝ մոտ 3.5 մլն մարդ: Միության գործունեության կարևորագույն ուղղություններից էր նաև թիկունքում համաճարակային հիվանդությունների դեմ համակարգված պայքարը[24]:

Բանակին առավել արդյունավետ օգնություն կազմակերպելու համար ՀՔՄ-ը 1915 թ. հուլիսի 10-ին միավորվեց ռուսական իրականության մեկ այլ խոշոր հասարակական կազմակերպության՝ Համառուսական զեմստվային միության հետ, ինչի արդյունքում ձևավորվեց նոր՝ միասնական կոմիտե՝ Զեմգոռ (Земгор կամ Комитет Всероссийских земского и городского союзов)[25], որի գլխավոր կոմիտե ընդգրկվեցին 4-ական անձ զեմստվոյական և քաղաքների միության կազմից[26]: 1916 թ. մարտի 16-20-ը Մոսկվայում Զեմգոռի նախաձեռնությամբ կայացավ պատերազմի ժամանակ տուժած երեխաների խնամքի կազմակերպման հարցերով համագումարը: Որոշվեց, որ զեմստվոյական և քաղաքային միությունները ստեղծելու են հատուկ մարմին, որը միավորելու էր անապաստան երեխաների խնամքով զբաղվող բոլոր հասարակական և ազգային կազմակերպությունների գործունեությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեծ թվով անապաստան երեխաներ գտնվում էին ռազմաճակատային գոտիներում, որոշվեց ռազմաճակատից երեխաների էվակուացիայի համար կազմակերպել բժշկական-սննդատու ջոկատներ, որոնց գործունեությունը կարգավորվում էր քաղաքային և զեմստվոյական միությունների գաղթականական բաժինների կողմից[27]:

Տարածքային մեծ արեալը և հարյուրավոր քաղաքների ընդգրկվածությունը հանգեցրին նրան, որ ՀՔՄ-ի կազմում ստեղծվեց 11 տարածքային մասնաճյուղ[28]: Դրանցից էր 1914 թ. նոյեմբերին հիմնադրված Կովկասյան քաղաքների միությունը, որը գործում էր ռուսական Կարմիր խաչի հովանու ներքո[29]: Իր գործունեության կարճ ժամանակահատվածում (1914-1917) այն դարձավ ՀՔՄ-ի գործող ամենահզոր տեղական կազմակերպությունը[30]: ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի նախագահ նշանակվեց հայազգի նշանավոր հասարակական գործիչ Ալ. Խատիսովը (Խատիս-

---

24 Նույն տեղում, стр. 14:

25 Земгор – Զեմստվային (земский) և քաղաքային (городской) միությունների հապավում:

26 Տե՛ս Шевырин В.М., *Земский и гороской союзы (1914-1917)*, аналитический обзор, Москва, 2000, էջ 26-27, տե՛ս նաև՝ *Беженцы и выселенцы. Отдельные оттиски изъ N17 известіи Всероссійскаго Союза Городовъ*, Москва, 1915, էջ 18:

27 Коробейников Ю. В., *նշվ. աշխ.*:

28 Նույն տեղում:

29 Պատերազմում տուժած վիրավորներին օգնելու համար 1914 թ. սեպտեմբերին ստեղծվեց Կովկասյան քաղաքների միությունը: 1914 թ. նոյեմբերին Կովկասյան քաղաքների միության համագումարում որոշվեց Կովկասյան քաղաքների միությունն ընդգրկել Համառուսական քաղաքների միության կազմում՝ Կարմիր խաչի հովանու ներքո (տե՛ս *Краткій отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.*, Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 11):

30 Коробейников Ю. В., *նշվ. աշխ.* :

յանը)[31]: Չնայած Կովկասյան կոմիտեն գործում էր ՀՔՄ-ի կազմում, այնուհանդերձ տեղական խնդիրների կարգավորման հարցում ուներ ներքին ինքնավարություն[32]: Քանի որ ՀՔՄ-ի գործունեության մեջ առաջնային աշխատանքային ուղղությունը բժշկական օգնություն ցուցաբերելն էր, միության կազմում մեծ թիվ էին կազմում բժիշկները, սանիտարները և գթության քույրերը[33]:

Գաղթականների թվի ավելացմանը զուգընթաց ՀՔՄ-ն սկսեց ակտիվորեն զբաղվել գաղթականական հարցերով: Միության Կովկասյան կոմիտեի՝ 1915 թ. (20 սեպտեմբեր-1 նոյեմբեր) հրատարակած տեղեկագրի համաձայն՝ արդեն 1915 թ. աշնանը Համառուսաստանյան քաղաքների միությունը սկսեց իր գործունեությունն ինչպես ռազմաճակատային գոտում՝ Վան, Իգդիր, Էրզրում, Բիթլիս, այնպես էլ օժանդակություն ցուցաբերեց մերձռազմաճակատային շրջաններում՝ Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում ապաստանած հայ գաղթականներին[34]: ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի կազմում մեծ թիվ էին կազմում հայազգի գործիչները (Համո Օհանջանյան, Ռուբեն Տեր-Մինասյան, ապագա բոլշևիկներ՝ Ալեքսանդր Աթաբեկյան, Հմայակ Նազարեթյան, Դանդուրյան)[35]:

Հարկ է նշել, որ հայ գաղթականների մի մասը, ռուսական բանակի կողմից Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ գրավվելուց հետո, վերադարձան իրենց նախկին բնակավայրերը[36]: ՀՔՄ-ի գործունեության տարածքն ընդգրկեց նաև Արևմտյան Հայաստանի՝ ռուսական բանակի գրաված հատվածը[37]:

Ռուսական բանակի կողմից Էրզրումը գրավվելուց հետո (1916 թ. փետրվար) տարածքում ակտիվորեն գործում էր Համառուսաստանյան քաղաքների միության գաղթականական բաժինը: Քաղաքների միության Էրզրումի բաժանմունքը գաղթականներին մատակարարում էր կենսական անհրաժեշտ պարագաներ, իսկ

---

31 Խատիսյան Ալեքսանդր (1876-1945)- հասարակական-քաղաքական գործիչ, բժիշկ: 1910-1917 թթ.՝ Թիֆլիսի քաղաքապետ, 1914-17 թթ. Կովկասյան քաղաքների միության նախագահ: 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, 1919 թ. ապրիլից 1920 թ. մայիսը՝ վարչապետ: 1920 թ. դեկտեմբերի 2-ին ստորագրել է Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո՝ վտարանդի: 1922-23 թթ. Լոզանի կոնֆերանսում Ազգային պատվիրակության անդամ էր: Գրել է «Հայաստանի պատմության ծագումն ու զարգացումը» (1930) հուշագրությունը: (Տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 166):

32 Տե՛ս Խատիսեան Ալ., *Քաղաքապետի մը յիշատակները*, Պէյրութ, 1991, էջ 239:

33 Նույն տեղում, էջ 238:

34 Մանրամասն տե՛ս *Краткіе сведенія о положеніи беженцевъ на Кавказе и оказанной имъ Союзомъ городовъ помощи за время съ 20-го сентября по 1-е ноября 1915 г., выпускъ II*, Тифлисъ, 1915, էջ 3-5:

35 Խատիսեան Ալ., *նշվ. աշխ.*, էջ 238, 252-253:

36 Տե՛ս *Беженцы и выселенцы. Отдельные оттиски изъ N17 известіи Всероссійскаго Союза Городовъ*, Москва, 1915, էջ 83:

37 Խատիսեան Ալ., *նշվ. աշխ.*, էջ 238:

Միության կենտրոնական գրասենյակը յուրաքանչյուր ամիս գաղթականներին հատկացնում էր 30-40 հազար ռուբլի[38]:

Կովկասյան կոմիտեի կազմում ընդգրկված քաղաքները գաղթականներին դրամական և պարենային օժանդակություն ցուցաբերելու համար կազմակերպում էին տարբեր բարեգործական միջոցառումներ, որոնց ընթացքում հանգանակված գումարը տրամադրվում էր հայ գաղթականներին[39]:

Դրամական նպաստի փոխարեն Էրզրումի որոշ բնակավայրերում՝ Մամախաթունում, Բաբերդում, Քղիում, Էրզրումում, գոյություն ունեին նաև ալյուրի մատակարարման կետեր, որտեղից օգնություն էին ստանում մոտ 2000 կարիքավոր գաղթականներ[40]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էրզրումի գաղթականության շրջանում մոլեգնում էին տարբեր համաճարակային հիվանդություններ՝[41] Քաղաքների միությունը բացեց 100 մահճակալով հիվանդանոց և ամբուլատորիա[42], որտեղ օրական հաճախում էին 20-30 հիվանդներ: Անդրադառնալով այս իրավիճակին՝ «Արև» օրաթերթը հաղորդում է. «Մուրադը Մուշից հեռագրում է Քաղ. Միութ. Կովկասեան բաժանմունքի լիազօրին, որ ամեն օր խմբով փախստականներ են գալիս, որոնց թում կան հիւանդներ»[43]: Հարկ է նշել, որ Միության սանիտարական շրջիկ ջոկատի գործուն աշխատանքների շնորհիվ կասեցվեց խոլերայի համաճարակը Էրզրումում[44]:

1916 թ. նոյեմբերի վերջերին Միության Էրզրումի բաժանմունքի ջանքերով որբանոց բացվեց 9-16 տարեկանների համար, որտեղ ապաստան գտան մոտ 45 որբ[45]: Պետք է նշել, սակայն, որ Արևմտյան Հայաստանի մերձճակատային գոտիներում ստեղծված որբանոցներն ըստ էության ժամանակավոր գործող հաստատություններ էին, քանի որ այստեղ հավաքված որբերն աստիճանաբար տեղափոխվում էին ռազմաճակատից առավել հեռավոր և անվտանգ շրջաններ, մասնավորապես Կովկաս և հանձնվում հայանպաստ կազմակերպությունների խնամքի տակ գործող որբանոցների: Այսպես օրինակ, 1916 թ. հոկտեմբերի դրությամբ Բաբերդում գտնված փախստական կանայք և երեխաները տեղափոխվեցին Սարիղամիշ՝ ՀՔՄ-ի Կովկասյան բաժանմունքի լիազորի դիմումի հիման վրա[46]:

---

38 Հարությունյան Ա., Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին, *«Էջմիածին»*, պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, ապրիլ, 2002, էջ 84:

39 Коробейников Ю. В., *նշվ.աշխ.*:

40 Հարությունյան Ա., *Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին…*, էջ 84:

41 Տե՛ս *Армянскій Вестникъ*, N5, 1916, էջ 15:

42 Նույն տեղում:

43 «Արև», 29 հուլիսի, 1916թ., էջ 3

44 Տե՛ս *Армянскій Вестникъ*, N12-13, 1916, էջ 37:

45 Հարությունյան Ա., *Հայ գաղթականության տեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ եղեռնի տարիներին…*, էջ 84:

46 «Արև», 29 հուլիսի, 1916թ., էջ 3:

Ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքում որբահավաք աշխատանքներն ավելի արդյունավետ իրականացնելու համար Միություն ընդգրկվեցին նաև հայազգի աշխատակիցներ, որոնց պարտականությունների մեջ էր մտնում նաև հայտնաբերել անմարդաբնակ վայրերում՝ քարանձավներում, անտառներում, լքված, ավերակ տներում թաքնված անապաստան ու ծնողազուրկ երեխաների և նրանց հանձնել որբանոցների խնամքին:

Քաղաքների միության աշխատակից, երզնկացի Սողոմոն Թեհլիրյանը ռուսական զորքերի հետ 1916 թ. եկավ Էրզրում ՝ «որբեր հավաքողի» պաշտոնով[47]: Իր հուշերում, անդրադառնալով որբահավաք աշխատանքներին, Ս. Թեհլիրյանը գրում է. «Ապրիլին ռուսները գրաւեցին Տրապիզոնը, իսկ յուլիսի կէսերին՝ Երզնկան: Էրզրումի դաշտում ամէն տեղ յայտնւում էին ոսկրացած, վայրենական վիճակի մատնուած մանուկներ, որոնց մեծ մասը իր գոյութիւնն էր պահպանել աւերուած հայ գիւղերի փլատակներում: Ձեռք ընկնողները դողում էին աշնան տերեւի պէս. մեծ ջանք էր պէտք հասկացնելու, որ իրենց այլեւս վտանգ չի սպառնում: Մոռացել էին լեզու, հայութիւն, մարդկութիւն: Խնուսում դրանցից խմբուած էին շուրջ երկու հարիւր հոգի: Ամէն տեղ առաջնակարգ արժէք էր ստացել որբերի գործը. ամեն որբուկ մի նոր աղիւս էր ազգը վերակառուցելու համար»[48]:

Հավաքագրված նոր որբերի խմբերի համար Երզնկայում Կենտրոնական վարժարանի շենքը վերածվել էր որբանոց–հիվանդանոցի, որի վարիչն էր Քաղաքների միության Երզնկայի ներկայացուցիչ բժիշկ Արշակ Պողոսյանը: Նա խնամում էր իրեն հանձնված հիվանդ որբերին[49]:

1916 թ. մարտի դրությամբ ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի աշխատակից Տիգրան Ջորյանը հաղորդում է Միության ծավալած գործունեության մասին Արևմտյան Հայաստանի այն բնակավայրերում, որոնք օկուպացվել էին ռուսական զորքերի կողմից: ՀՔՄ-ի հայազգի աշխատակիցը «Армянский Вестникъ»-ին հաղորդում է, որ Բիթլիսի նահանգում հայերի թիվը 1916 թ. սկզբին հասնում էր 9000-ի, իսկ Խնուսում ապաստանած շուրջ 800 հայ գաղթականների մեծամասնությունը կանայք և որբեր են: Վերջիններիս անմխիթար վիճակը փոքր-ինչ թեթևացնելու համար Միությունը Խնուսում բացեց որբանոց, որտեղ ապաստան գտավ 40 հայ որբ[50]: Տարոնի հայկական կոտորածների ականատես Կարապետ Եղիազարյանը, իր հուշերում անդրադառնալով ՀՔՄ-ի գործունեությանը, գրում է. «Սայուզ-Գորոդովի կողմից, թե՛ Խնուսի բերդում, թե՛ անհրաժեշտ պահանջ զգացվող մի քանի գյուղերում հիմնվեցին բաժանմունքներ, որոնցից մեկը Տիգրան Ջորյանի ղեկավարությամբ հիմնվեց Արոս գյուղում: Սայուզ-Գորոդովը, անցուդարձ կատարող զորքին և հայ գաղթականներին ժամանակավորապես տեղավորելու և սպասարկելու համար, Արոսում պատրաստել տվեց մարդկանց քնելատեղերը, գրաստների համար

---

47 Տե՛ս Սողոմոն Թէհլիրեան, *Վերյիշումներ (Թալեաթի ահաբեկումը)*, գրի առավ՝ Վահան Մինախորեան, Գահիրէ, 1953, էջ 75:

48 Նույն տեղում, էջ 88:

49 Նույն տեղում, էջ 90, 101:

50 Տե՛ս *Армянский Вестникъ*, N12-13, 1916, էջ 39-40:

ախոռները, հավաքվեց մեծ քանակությամբ խոտ ու վառելափայտ, գործում էին հացի փուռը, ճաշարանը, մթերային պահեստները, արհեստանոցը և խանութը»[51]:

ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեն 1915-17 թթ. ընթացքում գործուն աշխատանքներ իրականացրեց Վանում: ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի տեղեկագրից պարզ է դառնում, որ արդեն 1915 թ. Վանում Միությունը բացել է հայ գաղթականների համար հիվանդանոց՝ 200 մահճակալով[52]:

1916թ. ապրիլին ՀՔՄ Ատրպատականի շրջանի լիազոր ներկայացուցիչ նշանակվեց ռուս նշանավոր բանաստեղծ, գրականագետ և հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկին[53], ով արդեն օգոստոսին գործուղվեց Վան[54]: Հայոց ցեղասպանության թանգարանի հավաքածուի մեջ առկա է Ս. Գորոդեցկուն ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի կողմից տրված փաստաթուղթը, որտեղ նա լիազորվում է զբաղվել հայ գաղթականության հարցերով[55]:

Աշխատանքի բերումով նա ծանոթանում է ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեի Վանի լիազոր ներկայացուցիչ Արտավազդ Թումանյանի հետ, ում շնորհիվ սովորում է հայերեն: Իր յուրացրած լեզվական նոր գիտելիքները նա գործի է դնում Վանում իրականացրած որբահավաք աշխատանքների ժամանակ: 1916 թ. ամռանը Ս. Գորոդեցկու ջանքերով Վանում հավաքագրվում են հարյուրավոր հայ որբ երեխաներ: Նրա և ՀՔՄ-ի այլ աշխատակիցների ջանքերով հավաքագրված շուրջ 200 հայ որբ ապաստանում են Վանում գործող Միության որբանոցում: Այստեղ նրանք ստանում էին բժշկական օգնություն, տաք հագուստ և սնունդ[56], ապա տեղափոխվում Իգդիր, որտեղ գտնվում էր ՀՔՄ-ի ժամանակավոր գաղթակայանը[57]: Անդրադառնալով ՀՔՄ-ի իր գործունեության որբահավաք աշխատանքներին՝ Ս. Գորոդեցկին գրում է. «Պատկերացրեք, տառացիորեն հուր և արյան միջից հանել երեխաներին և ամեն ինչ կորցրած այդ կատարյալ որբուկների համար ստեղծել կյանքի տանելի պայմաններ, երբ շուրջը դժոխք ու մահ է»[58]:

---

51 Եղիազարյան Կ., Տարոն-Սասուն, հուշեր-վկայություններ, անտիպ, ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բ. 8, տետր 6, այս մասին տե՛ս նաև *«Արև»*, 30 հուլիսի, 1916թ., էջ 3:

52 Տե՛ս *Краткий отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.*, Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 3:

53 Սերգեյ Գորոդեցկի (1894-1967) – ռուս գրող, հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ, Հայոց ցեղասպանության ականատես: Հանդես է եկել հայկական կոտորածները դատապարտող հրապարակախոսական մի շարք հոդվածներով և գրել բանաստեղծություններ՝ նվիրված Հայաստանին և հայ ժողովրդին:

54 Ջաքարյան Ա., Վանը Ս. Գորոդեցկու կյանքում և ստեղծագործության մեջ, *«Պատմաբանասիրական հանդես»*, №3 (37), 2012, էջ 35:

55 ՀՑԹԻ գիտական ֆոնդեր, բ. 21, ֆ.հ. 125:

56 Տե՛ս *Краткий отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.* Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 4:

57 Ջաքարյան Ա., *Վանը Ս. Գորոդեցկու կյանքում և ստեղծագործության մեջ…*, էջ 36:

58 Նույն տեղում, էջ 37:

Ընդհանուր առմամբ 1916 թ. աշնանը Վանից գաղթեցին շուրջ 16.000 գաղթականներ: Երևանի նահանգի գաղթականության լիազոր Գ.Եվանդուլովին հղած իր հեռագրում ՀՔՄ-ի Վանի լիազոր Ս. Գորոդեցկին հայտնում էր. «Դիմավորեք գաղթականներին բոլոր կետերում…» և միաժամանակ անհրաժեշտ էր համարում համապատասխան միջոցներ ձեռք առնելու Նախիջևանի, Սուրմալուի և Երևանի նահանգի այլ գավառներում սննդատու կայանների աշխատանքն ապահովելու համար[59]:

Ռուսական զորքերի նահանջով ուղեկցվող Վանի հայ ազգաբնակչության գաղթի ժամանակ ՀՔՄ-ն իրականացրեց համակարգված աշխատանքներ: Այս կապակցությամբ Վան-Ջուլֆա և Վան–Իգդիր ուղղությամբ գաղթականների հոսքը կարգավորելու, նրանց շարքերում համաճարակային հիվանդությունների դեմ պայքարելու և սննդով ապահովելու համար ստեղծվեցին Միության սննդատու կայաններ: Իր գործունեությունը Միությունը կարգավորում էր՝ ռուսական ռազմական իշխանությունների հետ փոխհամաձայնեցնելով[60]:

Ռուսական զորքերի կողմից Տրապիզոնի գրավումից հետո՝ 1916 թ., ՀՔՄ-ի Կովկասյան կոմիտեն սկսում է կազմակերպել թուրքական կոտորածներից և տեղահանությունից փրկված սակավաթիվ տրապիզոնահայերի օգնությունը սննդով և հագուստով, ինչպես նաև Միության գլխավոր բժշկի պաշտոնակատար Համո Օհանջանյանի կարգադրությամբ ՀՔՄ-ի Տրապիզոնի լիազոր ներկայացուցիչ Աղամալյանի գլխավորությամբ կազմակերպվում է թռուցիկ ջոկատ՝ տեղացի հայ փախստականներին Դերսիմ և Տրապիզոն տեղափոխելու համար[61]:

Բացի ռազմաճակատային գոտիներում գտնվող հայ գաղթականներին լայն օժանդակություն ցույց տալուց, Համառուսական քաղաքների միությունը նաև աջակցեց Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում ապաստանած սոցիալ-տնտեսական, սանիտարական վատթար պայմաններում գտնվող բազմաթիվ հայ գաղթականների: Միության միջոցներով այս նահանգների որոշ բնակավայրերում բացվեցին ոչ միայն սննդատու կայաններ, բուժկետեր և հիվանդանոցներ, այլև տեղերում համաճարակային հիվանդությունները կանխելու համար կառուցվեցին հասարակական բաղնիքներ, կազմվեցին դեզինֆեկցիոն ջոկատներ[62]:

Ըստ էության, ռուսական իրականության մեջ ձևավորված Համառուսական քաղաքների միությունն Առաջին աշխարհամարտի տարիներին իր հումանիտար առաքելությունն ուղղորդեց նաև հօգուտ երիտթուրքական իշխանությունների ցեղասպան քաղաքականության զոհ հայ գաղթականների և որբերի: ՀՔՄ-ն իր

---

59 Տե՛ս Հարությունյան Ա,. Վան-Վասպուրականի բնակչության և պարսկահայերի 1916 թ. գաղթերի պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1(167), 1995, էջ 175:

60 Տե՛ս *Краткій отчетъ о деятельности Кавказкаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ…*, էջ 3:

61 *«Արև»*, 3 օգոստոսի, 1916թ., էջ 3:

62 Մանրամասն տես՛ *Краткій отчетъ о деятельности Кавказскаго отдела Всероссійкаго Союза Городовъ помощи больнымъ и раненымъ войнамъ съ момента возникновенія по 1-е февраля 1915 г.* Выпускъ I, февраль 1915, Тифлисъ, 1915, էջ 4-7:

հայանպաստ աշխատանքներն իրականացրեց Կովկասում, մասնավորապես Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում, Կարսի մարզում (Իգդիր, Սուրմալու) և Արևմտյան Հայաստանում՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի նահանգներում, հատկապես 1915-16թթ. ընթացքում:

Այսպիսով, իր գոյության կարճ ժամանակահատվածում՝ 1914-1919 թթ., հումանիտար ոլորտում իրականացրած գործունեության հաջողությունները միության անդամներին հնարավորություն տվեցին պետական նշանակություն ունեցող հարցերը լուծելու հասարակության լայն զանգվածների ընդգրկվածության շնորհիվ: ՀՔՄ-ն Առաջին աշխարհամարտի տարիներին հայ գաղթականներին մեծ օժանդակություն հատկացրեց ինչպես Ռուսական կայսրության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ ռուսական զորքերի կողմից գրավված թուրքական հատվածում: Միության գործուն աշխատանքների շնորհիվ հայ գաղթականներն ապահովվեցին պարենով, հագուստով, ստացան անհրաժեշտ բուժօգնություն, կազմակերպվեց նրանց էվակուացիան ռազմաճակատային գոտուց: ՀՔՄ-ը հայ գաղթականներին օժանդակելու գործում համագործակցում էր ինչպես հայկական բարեգործական կազմակերպությունների, այնպես էլ ռուսական Կարմիր խաչի, Տատյանայի կոմիտեի, Զեմստվային միության և նմանատիպ այլ կազմակերպությունների հետ:

ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՈՐԲԵՐԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գոհար Խանումյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանության տարիներին Համառուսաստանյան քաղաքների միությունը՝ ռուսական հասարակական կազմակերպությունը, մեծ աջակցություն ցուցաբերեց հայ գաղթականներին ոչ միայն Ռուսական կայսրության սահմաններում, այլև Արևմտյան Հայաստանի՝ ռուսական զորքերի կողմից գրավված տարածքներում, որտեղ բացվեցին սննդատու կայաններ, որբանոցներ, հիվանդանոցներ: Միության Կովկասյան կոմիտեի անդամները, որոնց շարքերում մեծ թվով հայեր կային, 1916-17 թթ. հավաքագրեցին հարյուրավոր անօթևան որբեր՝ Վանում (Ս. Գորոդեցկի), Երզնկայում (Ս. Թեհլիրյան, Ա. Պողոսյան), Բիթլիսում (Տ. Զորյան), Տրապիզոնում (Հ. Օհանջանյան):

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Համառուսաստանյան քաղաքների միություն, գաղթականներ, որբեր, որբանոցներ, Արևմտյան Հայաստան, Առաջին համաշխարհային պատերազմ:

ASSISNANCE OF PAN-RUSSIAN UNION OF CITIES TO ARMENIAN REFUGEES AND ORPHANS DURING WWI

Gohar Khanumyan

SUMMARY

Public organization of Pan-Russian Union of Cities (PRUC) greatly assisted Armenian refugees during the Armenian Genocide both in the territory of Russian Empire and Western Armenian territories occupied by Russian troops. PRUC organized feeding centeres, orphanages and hospitals. During the years of 1916-1917 the members of PRUC Caucasus Committee, which incorporates many Armenians, gathered hundreds of homeless orphans in Van (S. Gorodetsky), Erzidjan (S. Tehlirian, A. Poghosian), Bitlis (T. Zorian) and Trebizond (H. Ohanjanian).

Key words: Armenian Genocide, Pan- Russian Union of Cities, refugees, orphans, orphanages, Western Armenia, WWI

ПОМОЩЬ ВСЕРОССИЙСКОГО СОЮЗА ГОРОДОВ АРМЯНСКИМ БЕЖЕНЦАМ И СИРОТАМ В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

Гоар Ханумян

РЕЗЮМЕ

Российская общественная организация Всероссийский союз городов (ВСГ) в годы геноцида оказала огромную помощь армянским беженцам не только на территории Российской империи, но и на занятой русскими войсками территории Западной Армении, где были организованы пункты питания, сиротские приюты, больницы. Сотрудники Кавказкого Комитета ВСГ (среди которых было много армян) в 1916-1917 гг. собрали сотни беспризорных осиротевших детей в Ване (С. Городецкий), в Эрзинджане (С. Тейлирян, А. Погосян), в Битлисе (Т. Зорян), в Трапезунде (А. Оганджанян).

Ключевые слова: Геноцид армян, Всероссийский союз городов, беженцы, сироты, сиротские птиюты, Западная Армения, Первая мировая война